



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 602**

*26 հունիսի 2018թ.*

ք. Էջմիածին

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 1/4 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինության հետևանքները վերացնելու և վարչական իրավախախտման համար նախագրուշացում տալու մասին, պարզեց որ

Գազիկ Բաբկենի Պետրոսյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Չարենց փող., թիվ 4 շենք, բն. 4, անձնագիր AN0345043), Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 26.07.2018թ. արձանագրության հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Գազիկ Բաբկենի Պետրոսյանի մասնակցությամբ:

**Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը**

- Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների ու փողոցների հերթական ուսումնասիրության ժամանակ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 26.07.2018թ. կազմված արձանագրությունը ու տեղազնության ակտերը:

- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 06.06.2018թ. թիվ 759 գրությամբ Գազիկ Բաբկենի Պետրոսյանի նախագրուշացվել է շինարարական աշխատանքների դադարեցման մասին: Լրացուցիչ կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ քաղաքացի Գազիկ Բաբկենի Պետրոսյանը դադարեցրել է շինարարական աշխատանքները:

- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի զեկուցագիրը այն մասին, որ Գազիկ Բաբկենի Պետրոսյանը վերացրել է Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինության հետևանքները:



• <<Աստղիկ Մանուկյան>> ԱԶ-ի եզրակացությունը այն մասին, որ Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող կիսակառույց ավտոտնակը 23.08.2005թ. թիվ 1982736 անշարժ գույքի վկայականի համաձայն փոփոխության չի ենթարկվել:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Էջմիածին քաղաքի, Չարենց փող., թիվ 4 շենք, թիվ 4 բնակարանի բնակիչ Գագիկ Բաբկենի Պետրոսյանը Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կիսակառույց ավտոտնակի վրա առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի իրականացրել է ինքնակամ շինություն՝ շարունակելով բարձրացնել /շարքեր ավելացնելով/ կիսակառույցի պատը և տեղադրելով դարպաս:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 օգոստոսի 22-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 30.07.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG010435885AM/ քաղաքացի Գագիկ Բաբկենի Պետրոսյանը:

Գագիկ Բաբկենի Պետրոսյանը, ներկայանալով վարչական վարույթի լսումներին, հայտնել է, որ 23.08.2005թ. թիվ 1982736 անշարժ գույքի վկայականով նշված հողամասի վարձակալ ու շինության սեփականատեր Ելենա Սարգսյանը տարածքը կիսակառույց ավտոտնակով տրամադրել է իրեն, ավտոտնակ կառույցելու համար:

Գագիկ Պետրոսյանը ընունելով իր սխալը անկեղծ զղջացել է կատարածի համար, նշելով որ կատարել էր մի քանի շար քարերի ավելացում, արդեն առկա կիսակառույցի վրա և տեղադրել էր դարպաս, սակայն քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի գրություն-նախագրուշացումը ստանալուց հետո աշխատանքները դադարեցրել է: Պատասխանողը նշել է, որ կկանխի իրավախախտման վնասակար հետևանքները և կամավոր կվերացնի պատճառած վնասը, այսինքն՝ կդադարեցնի ապօրինի շինարարական աշխատանքները և տարածքը կբերի նախնական տեսքի:

31.08.2018թ-ին Էջմիածնի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից կատարվել է Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող կիսակառույցի տեղազննություն, որի ընթացքում պարզվել է, որ տարածքում շին.աշխատանքները դադարեցվել են, շին նյութերը տեղեփոխվել են, տարածքը և կառույցը բերվել են նախկին տեսքի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի անկեղծ զղջումը, իրավախախտման վնասակար հետևանքները կանխելը, պատճառած վնասը կամավոր վերացնելը վարչական մարմինը կազմեց արձանագրություն և որոշվեց Գագիկ Բաբկենի Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ՝ նախագրուշացման ձևով:

#### Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասին 3-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախագրուշացումը: Նույն



օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախագրուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախագրուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝ մեղավորի անկեղծ զոջումը:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք չեն նշված օրենսդրության մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ, 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ, հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հիմք ընդունելով իրավախախտողի կողմից անկեղծ զոջումը, իրավախախտման վնասակար հետևանքները կանխելը, պատճառած վնասը կամավոր վերացնելը՝ Գագիկ Բաբկենի Պետրոսյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ նախագրուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷԶՍԻԱՍՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 603**

*ՋԵ ԵՄԻԱԾԻՆ* 2018թ.

ք. Էջմիածին

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 1/5 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինության հետևանքները վերացնելու և վարչական իրավախախտման համար նախագգուշացում տալու մասին, պարզեց որ

Ալեքսանդր Մաշայի Ալթունյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Չարենց փող., թիվ 4 շենք, բն. 30, ն/ք 005337647), Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 26.07.2018թ. թիվ 9 արձանագրության հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Ալեքսանդր Մաշայի Ալթունյանի մասնակցությամբ:

**Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը**

- Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների ու փողոցների հերթական ուսումնասիրության ժամանակ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 26.07.2018թ. կազմված թիվ 9 արձանագրությունը ու տեղազնության ակտերը:
- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 25.07.2018թ. թիվ 1067 գրությամբ Ալեքսանդր Մաշայի Ալթունյանը նախագգուշացվել է շինարարական աշխատանքների դադարեցման մասին: Լրացուցիչ կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ քաղաքացի Ալեքսանդր Մաշայի Ալթունյանը դադարեցրել է շինարարական աշխատանքները:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի գեկուցագիրը այն մասին, որ Ալեքսանդր Մաշայի Ալթունյանը վերացրել է Էջմիածնի քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինության հետևանքները:



<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Էջմիածին քաղաքի, Չարենց փող., թիվ 4 շենք, թիվ 30 բնակարանի բնակիչ Ալեքսանդր Սաշայի Ալթունյանը Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի իրականացրել է ինքնակամ շինություն՝ ավտոտնակ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 օգոստոսի 22-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 30.07.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG010435877AM/ քաղաքացի Ալեքսանդր Սաշայի Ալթունյանը:

Ալեքսանդր Սաշայի Ալթունյանը, ներկայանալով վարչական վարույթի լսումներին, հայտնել է, որ ավտոտնակը կառուցված է եղել 1991 թվականին և նա բերել է շինանյութ՝ ավագ, ավտոտնակի տարածքը բարեկարգելու համար:

Ալեքսանդր Սաշայի Ալթունյանն ընունելով իր սխալը անկեղծ զղջացել է կատարածի համար, նշելով որ ավտոտնակի տարածքը բարեկարգելու նպատակով իր կողմից բերվել էր շինանյութ՝ ավագ, սակայն քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի գրություն-նախագգուշացումը ստանալուց հետո աշխատանքները դադարեցրել է և ավագը տարածքից մաքրել է: Պատասխանողը նշել է, որ կկանխի իրավախախտման վնասակար հետևանքները և կամավոր կվերացնի պատճառած վնասը, այսինքն՝ կդադարեցի ապօրինի շինարարական աշխատանքները և տարածքը կբերի նախնական տեսքի:

31.08.2018թ-ին Էջմիածնի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից կատարվել է Էջմիածին քաղաքի Չարենց փողոց, թիվ 4 շենքի բակում գտնվող կիսակառույցի տեղազննություն, որի ընթացքում պարզվել է, որ տարածքում շին.աշխատանքները դադարեցվել են, շին. նյութերը տեղափոխվել են, տարածքը և կառույցը բերվել են նախկին տեսքի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի անկեղծ զղջումը, իրավախախտման վնասակար հետևանքները կանխելը, պատճառած վնասը կամավոր վերացնելը վարչական մարմինը կազմեց արձանագրություն և որոշվեց Ալեքսանդր Սաշայի Ալթունյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ՝ նախագգուշացման ձևով:

#### Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասին 3-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախագգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախագգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախագգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝ մեղավորի անկեղծ զղջումը.



Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք չեն նշված օրենսդրության մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ, 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ, հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հիմք ընդունելով իրավախախտողի կողմից անկեղծ գոջումը, իրավախախտման վնասակար հետևանքները կանխելը, պատճառած վնասը կամավոր վերացնելը՝ Ալեքսանդր Մաշայի Ալթունյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ նախագրուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

**ԷԶՄԻԱՍՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**



**Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 604

26 սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Անդրանիկ Հունանյանին պատկանող /18.05.2007թ.ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի վճիռ. Քաղ.գործ թիվ 2-249/ հողամասին շինություններով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Էջմիածին – Մարգարա խճուղի թիվ 14 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 605

Զե անդրադարձվել է 2018թ.

ք.Էջմիածին

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի, Շահումյան փողոցի թիվ 70 տան բնակչուհի Անուկ Խաչումյանի դիմումը բնակելի տունը բաժանելու մասին պարզվել է.

Էջմիածին քաղաքի, Շահումյան փողոցի թիվ 70 հասցեում գտնվող տունը սեփականության իրավունքով /վկայական 0189042 / պատկանում է Անուկ Խաչումյանին, Մնացական, Կարինե և Գայանե Պետրոսյաններին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան » ԱԶ /վկայական թիվ 0244/ կողմից հաստատված հատակագծերը:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 70 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 0.0788 հա մակերեսով մասին /որից 0.004 հա ընդհանուր օգտագործման տարածք/ բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Շահումյան փողոց թիվ 70, 0.0548 հա մակերեսով մասին /որից 0.004 հա ընդհանուր օգտագործման տարածք/ բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Շահումյան փողոց թիվ 70/1 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ՝



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 606

« 27 » սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 05-Ի « ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»>> ԹԻՎ 173 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10 օգոստոսի 2017թ. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1016-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 05.12.2017թ. տրված թիվ ԱՏ-01/12/2017-6-0030 տեղեկանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 2018 թվականի ապրիլի 05-ի « Էջմիածին քաղաքի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների եվ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին հաշվառման ընդունելու և ցուցակը հաստատելու մասին» թիվ 173 որոշումը ճանաչել անվավեր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ







## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

### ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

*ԶԿ Երջմիածին* 2018թ.

608

ք.Էջմիածին

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՅՑՈՒՄ զՏՆԿՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ և 118-րդ հոդվածի 6-րդ կետի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ ՊՆ 26.09.2018թ. թիվ ՊՆ 03511537 գրությունը.

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.խորենացի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող ՀՀ պաշտպանության նախարարարությանը պատկանող բնակելի շենքին հատկացված 0,06467 հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը:
2. Փոփոխել սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը /ի դեմս ՀՀ ՊՆ/ պատկանող, Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.խորենացի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող հանրակացարանի գործառնական նշանակությունը բնակելի գործառնական նշանակության՝ որպես բնակելի շենք օգտագործելու նպատակով՝ առանց նախագծման թույլտվություն տրամադրելու:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 609

2018թ.

բ.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԶՊԱՀՊԱՆՎԱԾ  
ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԸ ԽԴՐ ՈՒՇՈՅԻ ՍԼՈՅԱՆԻ ԵՎ ԱԽ ՈՒՇՈՅԻ ՍԼՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Խդր Ռաշոյի Սլոյանի դիմումը պարզվել է, որ.

- Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 16.10.2017թ. տրված թիվ 5973 և 5974 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի Օստրովսկի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Խդր Ռաշոյի Սլոյանին և Ալի Ռաշոյի Սլոյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 1500քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 259քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի Օստրովսկի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 259քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Խդր Ռաշոյի Սլոյանի /ծնված 29.08.1962թ./ և Ալի Ռաշոյի Սլոյանի /ծնված 16.11.1964թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ











ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 612

29 սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Կարինե Ազատյանին պատկանող տարածքին /հիմք՝ սեղ. մատյան 1042/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Խորենացի փողոց թիվ 20ա/33 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ *մլմ* Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝







ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 613

28.12.2018թ.

ք. Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Ալվարդ Մկրտչյանին պատկանող բնակելի տանը /հինք՝ սեղ. մատյան 2534, 2535, 2536/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Թումանյան փողոց թիվ 45/1 տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Դ. ԳԱՄՊՈՐՅԱՆ





# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 614

28 սեպտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

## ՔՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի, Զվարթնոց թաղամասի Թորամանյան փողոցի թիվ 16 տան բնակիչ Վահան Աբգարյանի դիմումը բնակելի տունը բաժանելու մասին պարզվել է.

Էջմիածին քաղաքի, Զվարթնոց թաղամասի Թորամանյան փողոցի թիվ 16 հասցեում գտնվող տունը սեփականության իրավունքով /վկայական N 17122015-04-0046 / պատկանում է Վահան Աբգարյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱԶ /վկայական թիվ 0244/ կողմից հաստատված հատակագծերը:

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի, Զվարթնոց թաղամասի Թորամանյան փողոցի թիվ 16 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 0.0714 հա մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Զվարթնոց թաղամաս Թորամանյան փողոց թիվ 16, 0.0669 հա մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Զվարթնոց թաղամաս Թորամանյան փողոց թիվ 16/2 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ՝



Ռ. ԳԱՄՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 28 » *Արմավիր* 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 615

ք.Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 5/1 տան բնակիչ Մխիթար Հակոբի Սահակյանի դիմումը պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 2415568 տրված 08.07.2009թ և «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /վկայական թիվ 0244/ կողմից տրված չափագրությունը և եզրակացությունը/, Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 5/1 հասցեում գտնվող բնակելի տան ինքնակամ կառուցված 48.8քմ /ներքին 38քմ, արտաքին 48,8քմ/ կառուցապատ մակերեսով շինությունը, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված է ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 5/1 հասցեում գտնվող բնակելի տան ինքնակամ կառուցված 48.8քմ /ներքին 38քմ, արտաքին 48,8քմ/ կառուցապատ մակերեսով շինությունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված 48,8քմ մակերեսով շինության համար սահմանված 156160 /հարյուր հիսունվեց հազար հարյուր վաթսույն/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ







ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 016

« 02 » հոկտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-628 հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով «Ավագ Գագիկի Ավագյան» Ա/Չ-ի տնօրեն Ա.Ավագյանի դիմումը և Էջմիածին համայնքի ավագանու 14.09.2018թ. թիվ 64 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ա/Չ «Ավագ Գագիկի Ավագյան»-ին ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 16,2քմ և 37,2քմ /ընդհանուր 53,4քմ/ մակերեսով տարածքները, որոնք գտնվում են Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի 0 հասցեում՝ Էջմիածնի քաղաքապետարանի վարչական 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում, կադաստրային չափագրման գործնություն ծավալելու նպատակով, որպես գրասենյակի օգտագործելու համար, մինչև 2 /երկու/ տարի ժամկետով:

2. Տարածքի ամսական վարձավճարի չափը յուրաքանչյուր քառակուսի մետրի համար սահմանել 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ընդհանուր 53,4քմ համար՝ 26 700 /քսանվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

3. Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել նոտարական գրասենյակում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Ավագ Գագիկի Ավագյան» Ա/Չ-ի հետ տարածքի վարձակալության պայմանագրի կնքումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՇՏՈՆԱԿՍՏԱՐ

Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ







ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 617

ք.Էջմիածին

« 02 » հոկտեմբերի 2018թ.

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

